

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

**ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ <<ԱՐՅԱՆ ՓՈՒՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ >> ՓԱԿ  
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՌԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ**

Գյումրի 2019թ.

**<<ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ**

**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ**

<<Արյան փոխներարկման կայան>> փակ բաժնետիրական ընկերությունը 100 տոկոս պետությանը սեփականության իրավունքով պատկանող բաժնեմաս ունեցող առողջապահական բաժնետիրական ընկերություն է :

Ընկերությունը շահույթ ստանալու նպատակով հիմնադրված առևտրային կազմակերպություն է և ունի իրավաբանական անձի կարգավիճակ: Որպես սեփականություն ունի առանձնացված գույք, որն իր պարտավորությունների համար պատասխանատու է այդ գույքով, կարող է իր անունից կնքել պայմանագրեր, ձեռք բերել և իրականացնել գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրել պարտականություններ, դատարանում հանդես գալ որպես հայցվոր կամ պատասխանող:

Ընկերությունը ունի ֆիրմային անվանում, ինքնուրույն հաշվեկշիռ, օրենքով սահմանված կարգով բացված բանկային հաշիվ:

<<Արյան փոխներարկման կայան>> ՓԲԸ գործում է <<Փակ բաժնետիրական ընկերությունների մասին>> ՀՀ օրենքի, իր կանոնադրության և իրավական այլ ակտերի հիման վրա:

**<<ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ընկերությունը ՀՀ առողջապահության նախարարության կողմից լիցենզավորված է և սպասարկում է Շիրակի մարզի ազգաբնակչությանը և պայմանագրային հիմունքներով համագործակցում է մարզի բուժհաստատությունների հետ :

Ընկերությունում իրականացվում են հետևյալ ծառայությունները .

1. Դոնորական արյան վարակային անվտանգության ապահովվում ,
2. Դոնորական արյան և դրա բաղադրամասերի պաշարում, պահպանում
3. Կադրային դոնորի փոխհատուցում
4. Արյան կայանի պահպանում
5. Հղիների, բժշկական ցուցում ունեցող և ռիսկի խմբերում ընդգրկված անձանց ՄԻԱՎ-ի հետազոտություն

**<<ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՇԵՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ՈՒ ԱՄՐԱՑՎԱԾ ԳՈՒՅՔԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ընկերությունն իր աշխատանքները ծավալում է երկհարկանի քարաշեն շենքում, ունի 305.8 քմ տարածք, ամբողջովին վերանորոգված է, իր աշխատանքների իրականացման համար ունի անհրաժեշտ գույք, բուժաարքավորումներ և պարագաներ:

2005թ. <<Գլոբալ Ֆոնդ>>-ի ծրագրով նախատեսված գումարներով <<Վորդ Վիժն Ինտերնեյշնլ>> միջազգային բարեգործական կազմակերպության կողմից վերանորոգվել է 3 սենյականոց տարածք՝ 40 քմ մակերեսով որպես մարզային ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի լաբորատորիա, որը հազեցած է բուժաարքավորումներով և պարագաներով: Ստեղծված լաբորատորիայում հետազոտվում են դոնորական արյան փորձանմուշները արյան միջոցով փոխանցվող վարակների հանդեպ, ինչպես նաև մարզում հաշվառված հղիները, թմրամոլները և տուրդիսպանսերում հաշվառված հիվանդները ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի հանդեպ:

**ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԸ**

Ընկերությունն ունի 17 աշխատողներ, որոնցից՝

Վարչատնտեսական անձնակազմ՝ 5

Բժիշկ-լաբորանտ՝ 1

Լաբորանտ՝ 2

Բուժքույր՝ 5

Կրտսեր աշխատող՝ 1

Պահակ՝ 3

Ավագ և միջին բուժանձնակազմը վերապատրաստված են :

Ընկերությունը ունի 1 բժիշկ-լաբորանտի կարիք :

**<<ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ  
ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ  
ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ**

Ընկերության գլոբալ բյուջեն կազմում է 17858000 հազար դրամ, իսկ տարեկան վճարովի ծառայությունը կազմում է մոտ 13 մլն ՀՀ դրամ:

Արյան փոխներարկման կայանը Շիրակի մարզի բոլոր բուժհաստատությունների հետ աշխատում է պայմանագրային հիմունքներով:

Տարվա կտրվածքով ընկերությունում կատարվում է մոտ 500 արյունատվություն, որը լիովին բավարարում է մարզի բուժհաստատության պահանջարկը:

**<<ԱՐՅԱՆ ՓՈԽՆԵՐԱՐԿՄԱՆ ԿԱՅԱՆ >> ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ  
ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԵՆԻՇԵՐԸ**

<<Արյան փոխներարկման կայան>> ՓԲԸ-ի կառավարման ոլորտի զարգացման հիմնական ուղենիշերը պետք է ուղղված լինեն՝

1. Բուժ.հաստատության արդյունավետ կառուցվածքի ձևավորմանը (հաստիքային ցուցակի փոփոխություն և համաձայնեցում հիմնադրի հետ )
2. Վճարովի ծառայությունների ծավալի մեծացում :
3. Բուժ.օգնության որակի և սպասարկման կառավարման բարելավում:
4. Ֆինանսական մուտքերի ավելացում :
5. 5.ֆինանսական գործունեության թափանցելիության ապահովում և վերահսկողության արդյունավետ մեխանիզմների կիրառում :
6. Գործունեության ծավալների ընդլայնում և նոր ծառայությունների ստեղծում :
7. Մասնագետների ապահովումը (հմուտ և փորձառու մասնագետների ընդգրկում )
8. Բժշկական նորագույն տեխնիկայի, բուժգործիքների ձեռքբերում
9. Բժշկական կադրերի և բուժքույրերի շարունակական վերապատրաստման ծրագրերի իրականացում
10. Ընդլայնել համագործակցվող ընկերությունների թիվը: Անցկացնել համատեղ դասընթացներ արյան ծառայության վերաբերյալ բուժաշխատողների կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով: Համագործակող բուժհիմնարկներում ունենալ հրամանով անրագրված արյան ծառայության պատասխանատուներ:
11. Կամավոր դոնորների թվի ավելացում՝ բնակչության լայն շրջանակներում սանկույս քարոզչության միջոցով :
12. Կազմակերպել դոնորական արյան հավաքագրում արտագնա պայմաններում:
13. Ձեռք բերել սառցարան և օդորակիչ՝ սառցարանների սենյակի համար:

Կազմեց՝

Ս. Պետրոսյան